



Մասին լրագիրն 5 անգամ կը հրատարակուի լարարը . 4 Օրաբերք եւ . Շաբաթերք :

Տարեկան դին. 4. Դոկում համար 180 .

„	Գաւառաց	„	10 Մեհ
Վեցամսեայ	գին 4. Դոկում	„	90 Լրդ
„	Գաւառաց	„	5 Մեհ

Իւրաքանչիւր բնուց գին

Շաբաթաբերք	60 ֆրդ.
Օրաբերք	20

Իսկու գազան լրագրաց համար ծախ-
յր խմբագրություն վրայ է:
Ճանաչմանց սուրը մեկ անգամ համար
3 դր՝ խելու անգամ համար 2 դր.
Լրագրաց Ինքնաբերալ Ընտանի Կամ Դր
եւ ինչ գրություն Խմբագիր՝ ՏՊՈՒ-
նին պիտի ձգվին իւր, և հանձնու ծախ
քըն ալ զինվորին վրայ է:

[illegible]

ՔԱՂԱՔԱԿՆԵ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՆՈՒԹԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ պատերազմական դուր-
ժոց պաշտօնեայ՝ Նիէլ մարալպատին
հրաժարականի խօսքերը կրնա խա-
ղաղութեան նշան մը համարուել՝ ե-
թէ հաստատուէր։ Թոքպետ (Փարի-
զի մէջ զրուցուեցաւ թէ զօրաբանա-
կին մէջ նոր նուազումներ ընելու ո-
րոշում կ'ընէր Նիէլ մարալպատին ծանց-
գալով հրաժարական տուեր է, բայց
վերջին լուրերուն նայելով՝ Նաբոլէոն
կայսեր պաշտօնէից մէջ առ այժմ փո-
փոխութիւն չ'եղած է։ Արտուէր նա-
եւ թէ կայսրը 1867 յունիւ 19ին առ-
պետութեան պաշտօնեայն ուղղած
ազատական նամակին խոտուումներ
յետոս պիտի կոչէ եւ պաշտօնէից նոր
փոփոխութիւններ պիտի ըլլան, սա-
կայն ատենք ալ մինչեւ հիմա չկատար-
ւեցան։ Արեւելի ուրեմն որ ներկայ
գրութիւնն ու պաշտօնեայնեքը պի-
տի պահուին. օրէնսդիր ժողովը յուն-
վալի մէջ պիտի դնումարի եւ երւմբ-
տից հաշուեցոյցն ընդունելէ ետեւ իր
նիստը պիտի վերջացնէ, եւ նոր ընտ-
րութիւնները պիտի սկսին, որուն հա-
մար կը պատրաստուի կառավարու-
թիւնը։

Ապահովող գործերը տակաւին բա-
ցորոշ կերպարանք մը չառին, հասա-
րակապտութիւն պիտի ըլլայ թէ սահ-
մանադրական միապետութիւն՝ դեռ
յայտնի չէ։ Պաշտօնեայիներէն սմանք
իրենց անհամական կարծիքը միայն
տրական կուտաձորութեան նպատա-
ւոր կերպիւ յայտնեցին, սակայն մի-
անգամայն յայտարարութիւն ըրին
որ եթէ աղբային կապը հասարակա-
պետութիւն ուզէ, իրենք ալ պատ-
րաստ են ընդունելու։ («Ռայթ մ») լրագ-
րի իր ըրած փոփոխութեան վրայ ու-
րախանայած ետեւեւէ է՝ կուտաձոր-
ութիւնը խղճի եւ մտայ ազատութեան
դէմ ալ քանի մը կամահած միջոցներ
ձեռք առաւ։ Ճիշդիմենտուն կարգն
ու շատ մը վանական մարտնոթիւն
ներ լուծելով։ Նշեցաւ իրենք որ միա-
պետութիւն ըլլայ, ընտրուելիք միա-
պետն ալ դեռ յայտնի չէ։ Եւստամ-
մարդոցիկ եւ ոչ մէկը հաստատուն
գտն մը հիմնելու երաշխաւորութիւն
ներ կուտայ։ Ուստի ի իր թոր աւել-
իօ այս պարտգայիս մէջ ալ իր բա-
նաստեղծական լեզուաւ ուղանկայ
ւայ ուղղեալ նամակի մը մէջ կը յոր-
դորէ որ հասարակապետութիւն ըն-
դունելն։ «Ապահովող մեծաւարձն ու
զին երկրի վրայ այնչափ լայն արձա-
կեց, որ զայն մարեալ համար լիար-
քեմատա մը հարկաւորեցաւ։ («Ես չա-
հին վրայ պապերն իրենց թագը դը-
նելով, որ անհաւն չիլուցիկ մ'է, զայն
մարեցին։ Միապետութեան հետեւ։
Եւրոպայի մէջ միապետութիւն մ'աւել-
ի գտնուեցին ինչ չափ կրնայ ըլլաւ։
Հասարակապետութիւնը մարդոց
ինք իր վրայ ունեցած վեհապետ։

Թեան հաստատութիւնն է, վեհա-
 պետութիւն մը՝ որ ոչ կը ժխտուի, ոչ
 ալ ըսէի կը դրուի: Հաստատակա-
 պետութիւնն առանց սակաքնի ար-
 տաբիւլութիւն մ'է, առանց մարքի
 սպառնալու, առանց արգելքի ջըմարե-
 լութիւն, առանց կարօտութեան դոր-
 ծաւորութիւն, առանց հայկեապետու-
 Թեան հարստութիւն, առանց նախա-
 պաշարմանց դիտակցութիւն, առանց
 արգելքի խօսք, առանց ստութեան օ-
 լէնք, առանց զինուորաց զօրութիւն,
 առանց Վայէնի եղբայրութիւն: Հաս-
 տատակապետութիւնն է աշխուհա-
 Թիւն վասն ամենեցուն, դաստիարա-
 կութիւն վասն ամենեցուն, արդա-
 րութիւն վասն ամենեցուն, իսկ գըլ
 խառտում եւ ոչ մէկուն մը: Վերկա
 իղէականի մարմնաւորութիւնն է, եւ
 ինչպէս ծիծեռնիկը գարնան մուտա-
 բերն ու կարապէտն է, ազգ մ'ալ այս
 խորհրդակաւոր գարնանն օրինակը կու-
 տայ: 77

Եւ աղիւր ծանուցած էր թէ Լեզ-
ղիյ արտաքին գործոց պաշտօնեայ
լորտ Սթանիլ, Լիլլբրուքի գլխաւոր
վաճառականաց կողմանէ Սիսցեալ
Վահանգաց գեապանին՝ Գ. Ռեվե-
տի Շօնքին՝ տրուած կաշաքին մեջ
ճառ մ'արտասանելու եւ խաղաղութի-
ւոսկան յայտարարութիւններ ւրեր է ։
Եւ ճատանիկ լորտ Սթանիլի ճառին
գլխաւոր կարգւոները ։

« Երբեք չէր ընդհանուր համաձայնություն մը կա՝ ոչ միայն Կնդ. զիպ բոլոր քաղաքական մարդոց՝ այլ եւ ամեն կարգի Կնդ. զիպոյոց մէջ՝ Իրիտանական կառավարութեան ու ըրի ազգերու հետ բռնելիք ընթացիկ վրայ . այն է ուրիշ ազգաց իրաւունքը իրաւունք ունոք յարգել . լինէ՞ր ըսելու եւ թէ տկար . խաղաղութիւնը պահելու ջանալ, նախ Կնդ. զիպ մէջ, եւ յետոյ ալ՝ որչափ որ մեզնէ կախում ունի՝ Եւրոպայի եւ քաղաքակրթեալ աշխարհին մէջ . . . Կնդ. զիպ՝ ինչպէս նաեւ Եւրոպայի ու համայն աշխարհի համար երջանիկ օր մը կըլլայ՝ երբ այս դատաւարներն ու հզօնացուները, որք այս երկրին մէջ ընդհանրացուի կը տեսնեն, խաղաղութեան մէջը, յորձաւորողական նպատակներու թօթափումը, եւ ազգաց իրաւունքի յարգանքը Եւրոպայի մեծ ազգաց մէջ ընդհանրացուածալին . Կն. տոհմը միայն կրնանք տեսնել նիւթական, յառաջգիծութեան ամենէն մեծ ազգերէն՝ եւրոպացի քաղաքակրթութեան գայլ թակուր թիւնն ու ամօթն եղած բանին բարձուրն . Կն. ստորագայման պատերազմական պատրաստութեանց իրական կամ մտայածին հարկին վրայ կուգծի իտիւր որ մեր օրերն անլուր համամատուցութեան մը հոտած են . որք տուրքերը կ'աճեցնեն, արուեստներուն կը դնալ տեն, ապրողային եկամուտները կան ինչու կը գնան են, եւ կ'առաքուրալ իտիւր քաղաքակրթեան մէջ զմէջ աշխարհի վիճակն մը մէջ կը դնեն, ուրիշ պատեւ .

ըղաղմի երթխալու քալը մը միայն կայ :
 Եւ երկապէս թէ որ այս դրութիւնը
 մէկ երկու սերունդ տեսէ , ելումտից
 կրթմանման կամ մասնկութեան պի-
 տի առաջնորդէ : Եթէ ինձ հարցնե-
 լու լլլալը թէ ի՛նչ բան պէտք է մեծ
 տնտեսութեանը մէջ փոխադարձ վտա-
 հու թիւնը մերստանառեւելու համար ,
 անկեղծութեամբ կը խոստովանիմ թէ
 պատրաստի պատասխանս մը չունիմ :
 Եւ ինքիւր լուծող մարդը թերեւս
 մեղք կու թեան ամենէն մեծ բարեւ-
 բաքն ըլլայ ներքին դարուս մէջ : Եւ
 այս պահանջումը չեմ կրնար ընելու
 ուստի միայն չարիքը կը նշանակեմ :
 Եւ յալայն կրնամ այս միայն աւելցնել
 որ թէ եւ բարոյովն խեղճ դէմ է
 ենթադրել որ եթէ երկու տնտեսութիւն
 ինչպէս դէմ պատերազմելու որոշում
 տան , երբորդի մը բարեկամական մի-
 ջամտութիւնը կրնայ գլխիւրդ դարձել
 ցրենք , այսու ամանայիս , տասնէն ինը
 կրնամ յուսալ թէ չեղոր տնտեսութիւն
 մը , որ՛բայ ի ընդհանուր շահէն ու-
 րիշ նպատակ մը չունենայ , կրնայ
 պատերազմի առաջին օրէն առնելու մե-
 ծապէս նպատակ՝ անկեղծ եւ բարեւ-
 կամական միջամտութեամբ : »

Կարտ Սխանիկի այս յայտարարա-
րութիւնները բազայայտ կերպիւ կը
ծրագրեն Մեղփեյ բռնելիք քաղա-
քականութիւնը, որ ամեն բրիտանա-
կան պաշտօնեայ ծրագիրն եղած է ։
Աշտարեաղմէ խորշում եւ Նիպաճան
լէլ հաղիկն բարեկամական միջամտու-
թիւն պատերազմի առաջ քն առնելու
համար ։ Իսկ ի՞նչ կը մնայ ստեղծ թէ
երբ երկու տէրութիւն այնչափ պատ-
րաստութեամբ պատերազմի կը պատ-
րաստուին, ապաքէլ մանկու ժա-
մանակ խաղաղական յոյսերներու ա-
կանջ կը կախնին ։ Իշարութիւնը մին-
չեւ հիմա տար հակառակը ցոյց տը-
նալ է ։

Նառիկը աղտաւելն դործաց պաշ-
տօնեայն շտույց ՚ն վեր կը բանակցի
գաղղխական կառավարութեան հետ,
սրբէն զի Առմի արքունեաց հետ
վարու եելու եղանակ մը դտնէ։ Նառ-
լական կառավարութեան գլխաւոր
նպատակն է պազական երկրին գաղ-
ղխական զօրաց եւնելը, եւ իր բուն
գլխաւորութիւնն է սեպտեմբերի դաշ-
նագրութիւնը վերահաստատել մաս-
նաւորաց գլխաւորութիւններ ընծայելով
Թղթատարութեան մարքի անդադը
բոյ եւ այլն։ Եւհէ գաս Առմի հո-
ղէն երկաթէն գլխաւոր զօրը անցունելու
ն ուսմանագրէան միւնէն քանի մը
ըլիամէթը անդէն տաղակալաց տեսեւն
ի խալու իրաւունք կը ինդդէ։ Նաի
ընդգլխագիր մտաին բերանն եզոյ
լրագիրները կը պիգեն թէ տսիկա
Առմէն բալըրալին հրաժարիլ եւ պա-
պական կառավարութիւնը ճանչել է։
Ի՛նչ հարծուի որ խորհրդարանին մէջ
ալ ընդգլխագիր մտաին դործածելիք
գլխաւոր մատարեան մէկն այս պէտքի
բոյլը։— Վարդէան իսիամին լիւարին

տաշենցիներն եւ Վիլնիւի խմանաւ էլ
Թաթարացիներն հետ տեսակցելով միմեքե-
լը կ'ըզաւելցնէ, բայց ոչ որ տողդ-
տաշենցիներն ունին : Սը կարծուի որ
իշխանն Սպանիոյ Գործոց վրայ խո-
սակցեցէ : Բայց իր ուղեւորու թիւնն
բուն նպաստելով լեզուս յետոյ գիտ-
ցուի : Սպանիական յեղաշրջումով թի-
ւնն խոտրուց մէջ բուսական ուշադրու-
թիւն գրտած է. մանաւանդ ի-
բերական միութիւնը հաճութեամբ
կ'նկատուի եւ մեծ համակրութիւն
կը գտնէ :

Եւ իսպախին իւղմանէ երեւցած մութ
 կէտ մ'ալ փարատեցաւ : Վնասի մը
 կէտ պաշտօնական թերթեր կը ծա-
 նուցանէին թէ Տանիմարը՝ Վրասի
 դայնադրութեան մասնակից եղող
 կառավարութեանց եւ Վրասիոյ ծա-
 նուցադրեր տուել է նոյն դայնադ-
 րութեան : Եւ լիզիկի վերաներեալ
 յօդուածին գործադրութիւնը ինք-
 լելու համար : Վայց Քօթէնհալէն
 առնուած հեռագիրը մը կը ծանու-
 ցանէ թէ ծանուցագիրը զրկուելուն
 լուրը բարբորովն անհիմն է , եւ թէ
 այս լինդրոյն վրայ եղած բանակցու-
 թիւնները միշտ մի եւ նոյն վիճակին
 մէջ են :

Բերքիկայի Միացեալ-Վահան դայ նախագահի ընտրութիւնները լրացան, և Արամիժ զօրապետը մեծ հասարակապետութեան գլուխ զլլալու փառքն ունեցաւ, Վայց իշխանութիւնն յառաջիկայ մարտ ամսոյ մէջ ձեռք պիտի առնու: Ք'նորութեանց միջոցին Վորս—(Որէսնի մէջ եւ ուրիշ քանի մը անդեր քանի մը խառնութիւններ սխառահեցան, բայց մահաւոր: Հազարապետութիւնները իրաւ ժանրէն, երկու կուտակցութիւն կար իրարու դէմ: Հասարակապետական ըստած մարտ որ հրահրայինները կր ներկայացնէ եւ որպէս ընտրելին էր Վրամիժ, եւ աստիակարները որ հարաւա իններէն՝ այսինքն նախկին ազատամիրներէն կը բաղկանան: Վայց ընտրելին էր Ա. Զօրասի Սէյրը: Գլխաւորներն եւ վեճեր շատ եղան, բայց իրոյնպէս պատարաւքին մէջ հարաւայիններուն պայծառ զօրապետն ընտրութեանց աստաբէզին մէջ ալ յաղթեց: Հարաւային քանի մը նահանգայ մէջ ամեն օգինաց եւ կրտսանց հազարակ սեւերը Ժողովներէն ընտրութիւններէն դուրս ձգուեցան, եւ լուսովութեանց մեծ ամեն ալ այս պատճառաւ ծաղեցաւ:

Լեռդղիով եւ Գաղղիայ Մէջ Տուփ
բէն մինչեւ Բալէ ծովուն տակէն
գրուած խորտակներու միջոցաւ եր-
կաթովի մը շինուելու գաղափարը
նոր չէ։ Լեռդղիացիք այս անգամ
գարձեալ այս գաղափարը գործադ-
րելու փափաքելով, հարկուի չափ ե-
րեսի լի անձինք, աղուականներ, խոր
հըրդարանի անդամներ, եւ այլն ուղեւծ
մի արտադրեցին։ Եւստիցան կայսր
ուզգին, որպէս զի իրենց պաշտօն

բին դործադրութեանն օժանդակ հան-
դիսանայ:

Դհաւասիկ յիշեալ ուղերձին
թարգմանութիւնը:

« Ստորագրեալքս, հպատակք վե-
հախառ թագուհւոյն Լեւոնի, իւ-
սեցինք որ գաղղիացիներէ եւ անդ-
ղիացիներէ կազմուած մասնաժողով
մը կը փափաքի Ձեր վեհափառու-
թեան օգնութիւնը խնդրել Լեւոնի
եւ Կաղղիոյ երկաթուղիներն իրա-
րու հետ միացնելու համար ծովին
ներքէնէն խողովակեայ երկաթուղիի
մը շինութեան: Լեւոնի գործն երկու
երկրին բնակչաց մէջ վերջին ատենե-
րըս արագապէս աճած ընկերային յա-
րաբերութիւնները գիւրացնելու եւ
իրենց արուեստներն ու վաճառակա-
նութիւնն ընդարձակելու համար յան-
չափ փափաքելի եւ կարեւոր է:

« Լեւոնի ձեռնարկին կատա-
րումը մեր երկու մեծ ազգերը միա-
ցնող կապերը սեղմելով՝ անհուն օ-
գուտներ պիտի տայ երկու երկրին ալ,
եւ նշանաւոր ապացոյց մը պիտի ըն-
ծայէ անոնց սիրոյ եւ միաբանու-
թեան: Ուստի այս բաղձօգուտ գոր-
ծին արագ յաջողութեանն ի սրտէ
բաղձալով, կը յուսանք որ Ձեր վե-
հափառութիւնը կը հաճի ապրածել
անոր վրայ իւր օգնատափառ պաշտպա-
նութիւնը: »

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզէն հեռագրալուր մը կը ծա-
նուցանէ թէ Բարձր. Փոռատ փաշան
հինգշաբթի օրը Կարօլինէն Բիլա պի-
տի երթար:

Այստեղեան թղթատարութեանց
նոր անօդանւթիւնը ինչպէս արդէն
ծանուցած ենք, թղթատարութեանց
վարչութեան մէջ կարեւոր բարեկար-
գութիւններ ըլլած է, որք հասարա-
կութեան շահաւէտ ըլլալէ զատ՝ կա-
ռավարական պաշտամանց այս ձիւղը կա-
տարեալաբարձեւ եւ ունեցած՝ կարեւո-
րութեան ատմութեան հասցնելու մե-
ծապէս կը նպաստեն:

Դհաւասիկ յիշեալ նոր կարգադրու-
թեանց բովանդակութիւնը, որ տաճ-
կերէն ու գաղղիերէն լեզուներով ա-
ռանձին տետրակի մը մէջ հրատարակ-
ւած եւ մեզ ալ յատկապէս օրինակ
մը զրկուած ըլլալով, արժան կը հա-
մագինք հայերէն պարզ աշխարհարատ
լեզուի թարգմանել ի տեղեկութիւն
մերազդի հասարակութեան:

Տեսարկին պարտ իսկութիւնը եր-
կու մասի բաժնուած է, որոց առաջինն
ընդ հանուր տեղեկութիւններ են՝ հա-
տարակութեան ուղիւն, եւ երկրորդը
թղթատարութեանց երկու երկու թեան
ձանրանները օրերն ու ժամերը կը ցու-
ցնէ: Բոլոր մեզ երկրորդն առաւել
անմիջական կարեւորութիւն մ'ունենա-
լով՝ հասարակութեան համար, նախ
զայն կը թարգմանենք:

ԾՈՒՎԱՅԻՆ ԵՒ ԾԱՄԱՔԱՅԻՆ ԹՂԹԱ- ՏԱՐՈՒԹԵԱՆՆԵՐ ԶԱՆԲԱՅ ԵՒԱՅ ՈՒ ԶԱՄԱՅ ՕՐԵՐԸ

Անատու եւ Բուսնի ցամաքէն դացող
թղթատարութիւնները

Լեւոնի կողմը բանող թղթա-
տարութեանց մեծ մասը չորեքշաբթի
օրերը ձանրայ կենն: Արաբի օրերը
կէսաօրեայ եւ Բիւթան հայի, երեքշա-
բթի օրերն ալ Կամախիսի եւ Պաղատի
թղթատարները Կ. Պոլսի կը հասնին:

Բուսնի կողմը ցամաքէն՝ Նիշ, Ալ-
սին եւ ուրիշ կողմեր բանող թղթա-
տարները շաբաթի անգամ մ'ամեն ե-
րեքշաբթի օրերը թէ նամակներ եւ թէ
աւանդներն առնելով ձանրայ կենն, եւ
յիշեալ տեղերէն ալ երեք թղթա-
տարները շաբաթ օրերը Կ. Պոլսի կը

հասնին: Լեւոնի հինգշաբթի օրերը Լ-
սինի, Սոֆիայի, Նիշի եւ Պիլիպե-
կոպիւրը Սիւրիւժիով միայն նամակ տա-
նող թղթատարներ կը զրկուեն: Յիշ-
եալ տեղերէն երեք թղթատարներն ալ
ամեն չորեքշաբթի օրերը Կ. Պոլսի կը
հասնին: Երկու շաբաթի օրերն ալ Լ-
սինի, Սոֆիայի, Նիշի եւ Պիլիպե-
կոպիւրը Սիւրիւժիով միայն նամակ տե-
րող թղթատարներ կուզան:

Աստերական տեղութեան ծովե-
ղերէն ջաղդներէն ներքի կողմերը
բանող ծովային թղթատարութիւննե-
րէն են հետեւեորդերը:

Վառնայի ձանրով

Ա. Վառնայի, Եւսեփի եւ Ուսե-
փի ձանրով շաբաթի երկու անգամ
երեքշաբթի եւ ուրբաթ օրերը թղթա-
տար կենն, եւ մինչեւ ժամը 6 նամակ
եւ ուսանդ կուտուի: Երկուշաբթի
եւ հինգշաբթի օրերն ալ յիշեալ տե-
ղերէն Կ. Պոլսի կը հասնին:

Տրապիզոնի ձանրով

Լեւոնի չորեքշաբթի օրերը Լեւոնի,
Եւսեփի, Եւսեփի, Սոֆիայի, Սոֆի-
այի, Օրտու, Իւսիս, Բիւթանի հան-
դիպելով Տրապիզոնի կերթայ: Յիշեալ
տեղերն եւ Լեւոնի կողմերը կողմերը
զրկուելէք աւանդները մինչեւ ժամ 8
եւ թուղթերը մինչեւ ժամ 8 1/2 կըն-
դուին: Ա. երազարձին թղթատարը
զարձեւը նոյն նամակագրութիւնը հան-
դիպելով՝ երկու շաբաթի օրերը Կ. Պո-
լսի կը հասնին:

Սեւանի ձանրով

Սեւանի, Մանսաթը, Եւսեփի,
Եւսեփի շաբաթի չորեքշաբթի օ-
րերը շաբաթի Սեւանի կերթան: ա-
ւանդները մինչեւ ժամ 8 եւ նամակնե-
րն ալ մինչեւ 8 1/2 կընդուեն: Յիշեալ
տեղերէն երկու թղթատարներ-
ըն ալ նամակագրութիւնը հինգշաբթի օրերը
Կ. Պոլսի կը հասնին:

Բոլոսի ձանրով

Լեւոնի շաբաթ օրերը Բոլոս, Եւ-
սի Եւսի, Թիւրքալի եւ Իսկա եր-
թուր համար թղթատարներ կը հան-
նին: Չառաք-Գալէ, Գարա-Եւսեփ,
Բալալա եւ Սեւանի ալ հանդի-
պելով՝ աւանդները մինչեւ ժամ 8 եւ
նամակներն ալ մինչեւ ժամ 8 1/2 կըն-
դուեն: Յիշեալ տեղերէն ալ եր-
կու շաբաթի օրերը Կ. Պոլսի կը հա-
սնին:

Խլմիլի ձանրով

Լեւոնի հինգշաբթի օրերը թղթա-
տար կը հանուի Խլմիլի եւ այն կողմե-
րը, Ալեքսանդր, Չանաք-Գալէ եւ
Միսիլի հանդիպելով՝ աւանդները
մինչեւ ժամ 8 եւ նամակներն ալ մին-
չեւ ժամ 8 1/2 կընդուեն: Յիշեալ
տեղերէն ալ ամեն չորեքշաբթի օրերը
Կ. Պոլսի կը գայ:

Բեօքէզի թղթատարները

Լեւոնի առաւօտ Իզմիր թղթատար
կը հանուի Տարքա եւ Գարաբուսալ
հանդիպելով: Լեւոնի իրիկուն ալ կը
հասնին:

Կէմէլի ձանրով

Արաբի երկուշաբթի եւ ուրբաթ
օրերը առաւօտուն Պրուսիայի թղթա-
տարը կենն եւ Սուրաբուսալ ու Կէմէ-
լի ալ կը հանդիպի: Եւսեփի, եր-
կուշաբթի եւ չորեքշաբթի օրերն ալ
Կ. Պոլսի կը հասնին:

Պանարայի ձանրով

Լեւոնի չորեքշաբթի Պանարայի եւ
անկէց ալ Պալքէսի երթալու համար
թղթատար կենն: յիշեալ տեղերէն
ալ ամեն կիրակի առաւօտ Կ. Պոլսի
կը հասնին:

Թէքիւրազի ձանրով

Լեւոնի չորեքշաբթի եւ շաբաթ առա-
ւօտուն Թէքիւրազի թղթատարը կըն-
նէ, եւ Սիւրիւժի ու Լեւոնի հանդիպե-
լով հոն կը հասնին: Յիշեալ տեղերէն
ալ երկուշաբթի եւ հինգշաբթի իրիկուն-
ները Կ. Պոլսի կը հասնին:

Հասարակութեան մինչեւ չգերջին
կետնամակները յանձնելու գիւրու թեան
համար, թղթատարութեան գործա-
կանքը կը գնաւին առաւօտները եւ
նոյն շաբաթներուն մէջ:

Նամակներուն սակագինը

Պարզ նամակի մը սակագինը վաթ-
սուն փարայ է 100 ժամու հեռաւո-
րութեան համար, 3 զուրուշ է 101 ժա-
մէն մինչեւ 200 ժամ հեռաւորութեան
համար, եւ 6 զուրուշ է 201 ժամէն ա-
ւելի հեռաւորութեան համար:

Պարզ նամակի մը ձանրութիւնը
3 արամ է: Երբոր 3 արամէն աւելի
կընէ, ամեն մէկ արամի համար պարզ
նամակի գինին կէսը վրայ կը գրուի:

Երաշխաւորեալ նամակներու հա-
մար պարզ նամակներու կրկինը կը վե-
ճարուի:

Ծովային թղթատարութեանց նամակի
թափափանքը

Օսմանեան ծովեղերէն ջաղդներ-
ըն զրկուած նամակներուն ծախքը կան-
խաւ վճարելի է, թէ նամակաց եւ թէ ըն-
րազրաց վրայ նամակադրուած փակցնե-
լով:

Ծովեղերէն ջաղդները զրկուած
3 արամից պարզ նամակի մը ծախքը
բաւական փարայ է: Երբոր նամակ-
ները 3 արամէն աւելի կընեն, ամեն
մէկ արամի համար 20 փարայ աւելի
պիտի վճարուի:

Լրագիրներու թափափանք

Լրագրաց թղթատարութեան ծախ-
քն է 5 արամից թղթի մը համար
5 փարայ, 10 արամից թղթի մը հա-
մար 10 փարայ, եւ 10 արամէն աւելի
եղալ թղթերու համար 20 փարայ:

Թղթախաղ գրքերն ու պարբերա-
կան տետրակները, հեռագրութիւնը պե-
րագրի կամ ֆերմաններ պարանախոյ
ճրարները, գործի կամ դատի վերաբե-
րեալ թուղթերը, արձանագրութիւն-
ները, հաշիւները եւայլն պարզ նամակի
մը ծախք կը վճարեն մինչեւ 40 ար-
ամ: Եւսեփի աւելի կընալները՝ ամեն
մէկ ժամու համար 10 փարայ աւելի
պիտի վճարեն: Եւսեփի կընան եւ
լաշխաւորուիլ ծախքն կրկնապատկը
վճարելով: Այստեղեան պարանախոյ
լրագրերը, լրագիրները տետրակները
եւ ուրիշ տպեալ թուղթեր վերաբե-
րեալներուն կէսը միայն պիտի վճարեն:

Ա. երազարձի թափափանքի համե-
մատ՝ լրագիրներու եւ ուրիշ տպեալ
թղթերու ծախքը մի եւ նոյն է թէ՛ ծո-
վու եւ թէ՛ ցամաքի համար:

Թանկագին նիւթերու եւ ոսկոյ ու
արծաթի ճրարներու սակագինը

Լեւոնի ցամաքային թղթատարու-
թիւնը գնաւած տեղեր ճրար կընայ
արուիլ ու առնուիլ:

Ոսկի ատակներուն բոսթայով փո-
խադրութեան ծախքը 1000 զուրուշի
համար 2 փարայ է ամեն մէկ ժամու
վրայ:

Գոհարեղենացի եւ ուրիշ թանկա-
ղին նիւթաց փոխադրութեան գինը
յայտարարութիւն երեք արժեքին վրայ
է՝ 1000 զուրուշին 2 փարայ հաշիւը
ենելով ամեն մէկ ժամու համար:

Ոսկի եւ արծաթ օտակ ինչպէս նաեւ
թանկագին նիւթերը զրկուները կընան
իրենց ապրանքն ապահովելու ապա՝ 1000
զուրուշի համար իւրաքանչիւր ժամու
վրայ 6 փարայ աւելի վճարելով:

Պղնձ ատակները բնաւ չեն կընար
բոսթայով փոխադրուիլ:

Եթէ ճրարի մը պարունակութիւն-
ըն քննուելով յայտարարութիւն երեք
արժեքէն աւելի գնաւոր, թէ՛ զրկուի
եւ թէ՛ ընդունուի կրկնապատկի ծախք
պիտի առնուի այն աւելորդ արժեքին
վրայ:

Եւսեփի օրինակներէ եւ ուրիշ
շատ տեղ չընտղ բաներէ հօրային 10
փարայ ծախք պիտի առնուի ամեն մէկ
ժամու համար:

Յատուկ թղթատար
Եթէ մասնաւոր մէկը թղթատա-
րութեան ինքրէն որ նամակ մը յատուկ
թղթատարաւ զրկուի, պէտք է որ կան-
խաւ երթալը ժամերուն վրայ հաշիւ-
ընելով ծախքը վճարէ, որ թափափանքի
ընելու մէկ ժամու համար 25
զուրուշ է եւ Սիւրիւժի ընթացքով 3 1/2
զուրուշ:

Այստեղեան կառավարութիւնը՝
հայ սեղանաւորաց գլուխ վսեմաշուք
Փափազեան Գեորգ Եփեմի օրդի
մեծապատիւ Կարապետ Եփեմի իւր-
րորդ կարգի պաշտօնատարութեան տա-
ափման շնորհեց:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ ԵՍՏԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆԵ

Դասակարգ	Կարգ
24 հոկտ. հինգշաբթի իրիկուն	43 22
25 » ուրբաթ առաւօտ	43 20
» քաղցեցաւ	43 16
» կէս օր քաղցեցաւ	43 17
» քաղցեցաւ	43 23
26 » իրիկուն քաղցեցաւ	43 23
» շաբաթ առաւօտ	43 27
» քաղցեցաւ	43 27

ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՁՆԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Օգտուէ՛ք ընկերութեանց ազգին
մէջ ծաւալումը շատերուն փափաքած
բանն է. սակայն զաւաթն այն է որ այս-
պիսի ընկերութիւններ հաստատուած
ժամանակ փոքր ի շատեւ եւ անդ ցոյց կը
տուի, իսկ վերջերս երթալով յարա-
տեւութիւնը կը պակսի: Տարակոյս չու-
նիք որ այս ճանապարհներ չգիտող
խիստ քիչ կայ: Բայց այս ալ ոչինչ նուազ
ստոյգ է որ ամեն ազգօգուտ ձեռնար-
կութիւն՝ թէ եւ կանգուն ալ չմնայ՝
այսու ամենայնիւ միշտ արդիւնք մը կը
նշէ: Ուրիշներ կուզան եւ նախորդ-
ներուն գործն իրենք ձեռք առնելով կը
շարունակեն, եւ այսպէս յառաջդիմու-
թիւնն իր բնական ընթացքը կընէ:

Հատերը կառավարկեն՝ ազգին մէջ
մէջ ուսմանց եւ քաղաքակրթութեան
ընթացքը ծաւալուելու համար մեծ ընկերու-
թիւն մը հիմնել, որ կարենայ իր առ-
ջե կեցած հայալիկան գործն առաջ
տանիլ: Եւսեփի ընկերութիւններն ալ
տեսանք, որք դրամագրութիւնը հաւա-
քեցին, բայց քիչ մը վերջը կամ բո-
ւրովին ցրուեցան եւ կամ բնաւ գործ-
չտեսան: Իսկ ուրիշներն աւելի հա-
մեառ երեւութով իրենց կարողութեան
չափ գործեցին, եւ նիւթական ու բա-
րոյական պատուներ տուին: Համագը-
կայ կամ Բարեգործական ընկերու-
թիւններուն չկրցած կատարած անոնք
փոքր ի շատեւ կարողացան կատարել,
եւ իմէ՛ք ազգին մէջ ըստ արժանեոյն
քաջայերութիւն գտնել, մեծ գործեր
ալ ի զուլի հասնելուն տարակուսելի
բան մընէ:

Առեւտրէն այսօր խիստ օգտակար ըն-
կերութեան մը վրայ ուշադրութիւն
հրաւիրել, որուն եթէ պէտք եղած օ-
ժանդակութիւնը արուի, ամեն կողմ
արձակել սկսած ձեւերը կընան զար-
գանալով ամենապիտանի եւ կենսատու
ծառ մ'ըլլալ: Խօսքերնիս Լեւոն-
նուէր ընկերութեան վրայ է, որ թէ եւ
մեծամեծ խոտորմներ ու յայտարարու-
թիւններ ըրած չէ, բայց կրցածին չափ
կաշխատի, կը մշակէ. ու միայն ապա-
գային համար առաւ հոնձը կը պատ-
րաստէ, այլ արդէն ալ տուած է:
Աստուծոյ քաջակամ եւ անհոգի ամենէն
փառվառն ժամանակները, երբ ամեն
սիրտ ապագային վրայ մեծ յուսով լըց-
ւած էր, աշխոյժ եւ անձնուէր երիտա-
տարները ուսումնի ու կրթութեան միջ-
ջե այն ատեն չվաճառեցան միաբերու-
մէջ մտցնելու փութով ձրկապատիտու:

... խմբակիր Մասիս ազգագրական լրագրող...
Թեև և Ռեդակցիոն խմբակիր խորհուրդը իւրեանց տարեկան հաշուեկշիռներուն նայելով զիտեմքն թաղիս եկաւ մտնել առաւելութիւնը ծախսուող վրայ և ըստ այնմ կը մտաւ տակաւարարէն եկեղեցւոյ դպրոցաց և այլ հաստատութեանց պիտոյքը, սակայն այս ընթացքը կանոնաւոր հիման վրայ հաստատուած չըլլալով, պարտքերն ու տոկոսներն յաւելցած և քանակաւոր եղեց կողմը իւր հաւատարմութեան թիւերը դրեթէ կորսնցուցած ըլլալուն, խորհուրդս պարտք անձին համարեց՝ եկամտից համեմատ ծախսուող աւ ռազման մը դընելով կանոնաւորութեան ենթարկել իւր ընթացքը, և աւսոր հետ մեկտեղ աշխատիլ ապագային մէջ իւր պարտքերը

Թեթևեցելու. Աւստի իւր 1867 տարւոյն հաշիւները Ազգ. վարչութեան ներկայացնելէն յետոյ 1868 յուլիս 1էն սկսեալ իւր Պիւտձէն պարտատեց և ըստ այնմ դործադրութեան սկսաւ:
Այսու մէկ օրինակը Ձեր մեծապատուութեանը դիմելով, խնդրեմք որ բարեհաճիք ձեր ազգագրական լրագրոյն մէջ անկիւն մը շնորհել աւ ի հոգսունակութիւն արդոյ հասարակութեան:
Ընդունեցէք...
Ինքա հոկտ. 18 1868 Վանապուր Վանապետ (Կնիք) Վարդան Չիֆթիեան Ստեփան Խ. Փափազեան

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏՕՆ ԲԻՇՕԹ

Այս տարեկան զուարճալի և խրատական վիզուալութիւն մը, զոր պարզ տաճիկերէն լեզուի կը թարգմանէ Մեծ. Տէրոյնց պատուելիքն, և որուն Ե. հասարակարգէն աւարտած ըլլալով հրատարակած է:
Այլ զանաւոր ամեն հայ դրամաւորաց քով, և Մասնաւոր փաշան թիւ 220 Պոլսոյ Մանուկ աղային խանութիւն. Օգտուար փոքր թիւ 22 Տէ. միջոցաւ լուսանկար թիւ և Իգլիկ Ե. հաշիւներէն Հայրապետ աղային գրատուէր. Գին 35 զուրուշ:

ԲԵՐԱՅԻ ԹԱԳԱԿԱՆ ԽՈՐՀԱՐԴՈՅ ԸՆԴՈՒՆԱԾ ՊԻՏՅՈՒՆ

1868 ՅՈՒՆԻՍ 1ԷՆ ՄԻՆՁԵՒ 1869 ՅՈՒՆԻՍ ՎԵՐՁ

ՄՈՒՏԻՔ	
Իւզապին տարեկան	2500
Դանձանակք	30000
Բանկալք, մամաճախ	15000
Մամաճախ քահանաներէ	3000
Վարսեաց վարձք և զգեստուող նուէր	5000
Թապալք	6000
Կուէր եկեղեցւոյ ննջեցեալք և մկրտութենէ	2600
Դպրոց, ննջեցեալներէ	3000
Եղբայր, թաղախի հատոյթ	8000
Կուէր դանապանաց Ս. Օստիկ և Ծուռնի	5000
Դիւանատան հատոյթք, վիշապիկ և վաւերացումէ	3000
Վազըք, Փերաղ և Իճարէ	1000
Կարուածք, հին և նոր ըստ տուժարի	331596
Տոկոս, Մարուգէեան եղբայր Հակոբէն	1800
	417496

ԵԼՔ	
Ս. Երկրորդութիւն եկեղեցի	57370
Եղբայր	11060
Դիւանատան	19360
Թաղախի	9350
Կարուածք թիւեր	10000
Վարսեաց վարձք և ծախք	12000
Տոկոսք	144000
Կարուածք, Փերի դիւղ եկեղեցւոյն	3000
Տարեկան, ըստ կտակադրութեան 2 քերքը տուելիք	240
Դպրոցք	51110
	317490

Դանձանակք:

1. Ինչպէս որ կալուածոց ցուցակէն յայտնի է թէ և չափ կալուածներէ 100, 105, 106, 110 դուրուշէն Օսմանեան լիրա առնուելով և զանոնք չըջարեութեան մէջ անցած դնով տաւով կամ փոխաւելով չափ կըլլայ, սակայն տոկոսաց չափերն 100 դուրուշէն Օսմանեան լիրա տրուելուն և այս կերպով ըստ տակի չափն ու զէնը հաւասարակշիռուն, ասոր մանրամասն հաշիւ ցոյց չարուեցաւ:
2. Թէ նորաշէն և թէ հին կալուածոց վարձու գներուն բարձրանալը յուսալի է:
3. Կորաշէն Կարեկեան վարձարանը բացուելուն, և տեղափոխութիւն ըլլալուն առթիւ, դասատուաց և ուրիշ վարձատուաց յաւելնալը և թէ ամսականաց վճարիկ յաւելումն ըլլուելիքը թաղական խորհուրդս զգալով, և որովհետեւ սոյն

Պիւտձէն պարտատեց առնել տակաւին նորաշէն տները չինւած և վարձուած չէին, ու երկու տանց տարեկան վարձքը 15000 դուրուշ նշանակած էր, և չինուելէն ետքը փոխանակ 15000 դուրուշի՝ 23640 դուրուշի վարձեց, ըսել է 8640 դուրուշ աւելի չափ մ'եղաւ, ուստի վերստին առանց Պիւտձէն դուրուշեանը զուլիւր 8640 դուրուշի դուրուշը հետեւեալ կերպով բաշխումն ըրաւ:
Դպրոցաց ծախքին յաւելումն տարեկան 7200
Ետաքճիկի տնտեսական յաւելումն 1200
8400
Ինքա հոկտ. 18 1868 (Կնիք) Վանապուր Վանապետ Վարդան Չիֆթիեան* Ստեփան Խ. Փափազեան

* Եթէ Վանապուրի մը անհրաժեշտ եղած յատկութիւններէն մէկն ալ կանոնաւոր դր մ'ունենալն է, առանց չտրուանցութեան կրնանք ըսել թէ Բերայի Թաղական խորհուրդին առնուող պիտոյքը՝ Կ. Պոլսոյ մէջ առաջինը կրնայ համարուիլ իր ստորագրութեան գեղեցկութեամբը, զոր կարգաւոր համար բաւական գովաւորութիւն քաշեցինք:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ	ԱՌՄՏԻՔ
Յորեն կարծր Պէտարապիտ	30-32
» » Աղաք	34-33
» » Պալլէք	29-31
» » Պուրկաղ	29-30
» » Թէքլիտաղ	28-29
» կակուղ Աղաք	32-34
» » Պէտարապիտ	32-34
» » Պուրկաղ	28-30
» » Վառնա	26-28
» » Պալլէք	26-28
կիրքա թունա	32-34
կիրքա տարեկան թունա	47-48
» » Անատոլ	46-47
Գարի թունա	14-14.20
» » Անատոլ	14-14.20
ԽՈՂԱԿ ԶՈՐ	
Պուրսա	—
Անատոլ	—
Բոլոս	—
Իտիլի	—
Ծախած	30-78

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Բանակի կէրէ	Հոկտ. 9-10
» Իգլիկ	» 40
» Ստանա	» 9.10
» Պարսկաստան	» 7
» Վրաստան	» 8
Բուրդ Անատոլի լուսնուած	» 40-41
» » չլուսնուած	» 3-20
» Բուռլի լուսնուած	» 43
» » չլուսնուած	» 6
ձէյրի Լինկ և Կայս	» 46-47
» Թոխատ	» 14
» Զորում	» 41.20-42
Մաղը Պարսկաստան	» 43
» Անատոլ	» 44
Մաղէյ Կասթամուլ	» 43
Թիֆլիս Լինկուրի	» 44.20
» Կասթամուլ	» 45
» Պէյրազար	» 43
» Զէրքէզ	» 43
» Վան	» 30
Մետաքս Պարսկ. Բէշա	» 46-50
Աֆիոն	» 320
Բիթլիս	» 26-30
Սուսա	» 3-4
Կասթամուլ հոնտ Անատ. Բիլէ	» 36
» Բուռլի	» 35
Զէթ Մուստիլա	» 7.20

Ձիթ Այվալ	» 7.20
» Սաքըզ	» 8.20
Աճառ (Սապոն) Կանտիա	» 7
» » Միտիլի	» 5.20-5.30

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խաչիկ Բիւ	100 հոկտան	730-830
Շաքար փոշի Անգլ.	կնդ.	228-230
» » Գաղղ.	»	226-227
» » Գաղղ.	»	283-290
Զայ Բոնի	հոկտան	40-50
» Բէք	»	23-26
Անագ (զաւայ)	կնդ.	290-
Պղնձ (պիւլէն)	հոկտան	5.10
Լեղակ (չիլի) Պէնկալ	»	140-140
» » Մատրաս	»	75-84
Զինք տախտակ 100 հոկտ ֆր.	»	108-110
Երկաթ ձողաձիւ	»	63-66
» տախտակ	»	108-
» բեւեռցու	»	63-
Բարֆիձա	»	94-
Բրինձ Խալիկ 100 Բիւ. ֆր.	»	40-40.20
Կարագ եղ Բուսիոյ	Դր.	13.20
Խալիկա	»	24-26
Արտամաշիկ Անգլիկ. անո. 9-12	»	143-145
Թիթիկ (Թէնէքէ) զոյգ անո.	»	283-293

Մասիս լրագրոյ բաժանորդագրութեան տեղերն են Կ. Պոլսոյ Չիֆթիեան փոխարին թիւ 6 Մասիսի խմբակի գրատուէր իսկ զաւտաց մէջ հետեւեալ հոգաւորաւոր սենտակները
ԻԶՄԻՐ. Զարուկիւն աղա Տէտէան. ԿԻՍՏԻՆՈՒՊՈԼԻՍ. Խորոյ աղա Թ. Կակիւ ձեան.
ԱՍՏԱՆԱՐԱՐ. Մ. Զաւոր աղա Տ. Գրիգորեան.
ԱԳՐԱՆՈՒՊՈԼԻՍ. Մ. Սուքիաս աղա Գալուստեան.
ՏՐԱՊԵՆԶ. Պ. Խաչատուր Լիւմսեան.
ԿԱՐՏ. Կարապետ պատուելի Զաւորեան.
ՍԵԱՍՏԱՍ. Վարդան Էֆէնի Սեդրա-հան.
ԵԱՏ. Մ. աղա Խաչիկեան.
ՀԱԼԷՊ. Նիկողայոս աղա Տէր Մարգարեան.
ԵՐԶՐԱՅԱՆ. Ընկերակցաց Թանգարան ՎԱՆ. Գրիգոր աղա Խաչատուր.
Ուրիշ քաղաքներէ ստորագրուելու գործերն այս տեղերէն մէկուն հետ կրնան յղուիլ:

Խմբակիր-Տորէն
Կ. Ս. ԻԻԹԻԻԶԵԱՆ

Ի ՏՊԱԿԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԿՈՅ
Կ. ՊՈԼԻՍ ԶԵՆԻԼԻ ԽԱՆ